

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻ

(Շաբ. տե'ս «Բազմ.» 1973, ք. 1-2, էջ 207-210)

ՈՂԲ ԺԶ.

Ո՞ր մէկ ամպը քեզ կ'ըլլայ վերարկու,
Ո՞ր մէկ հորիզոնն ըզքեզ կը պատէ.
Զերծ ամէն չափէ, ամէն կըշիռէ,
Գոյութեամբ ամբողջ անծանօթ ես դու:

Բաց են քու դիմացդ ուկեանոս ու լեռ,
Դուն ինքդ երկնաւոր, լոյսէն աւելի.
Ի՞նչ է քու անունդ, յայտնուէ՛ ինծի,
Որ քեզ Տէ՛ր ճանչնամ եւ ոչ թէ պատկեր:

Թէ սրտիս խորէն կոչեմ բարերար,
Զեփիւտի շունչ է որ շուտով կ'անցնի.
Ի՞նչ է քու անունդ, յայտնուէ՛ ինծի,
Որ քեզ Տէ՛ր ճանչնամ եւ կեանքիս պատճառ:

27. 4. 1972

ՈՂԲ ԺԵ.

Ցաւ, հեծութիւն, Տէր, մի՛ ամպեր իրարու,
Մի՛ զիս տանջեր, ես վիրաւոր եմ արդէն.
Սարսափ կը զգամ անդունդի մէջ իյնալու,
Ուսկից լոյսին ալ յոյս չըկայ դառնալու:

Հալածական եմ հայրենի աշխարհէն,
Մի՛ զիս մատներ օտարութեան մշտնջեան.
Զրկուած եմ ես անմահական դըրախտէն,
Մի՛ զիս թողներ առանց տունի քաղցրութեան:

Ով կ'արտասուէ՝ ես եմ ընկեր իր ցաւին,
Թոյլ տուր, սեղմեմ իջը կուրծքիս տըրոփին.
Դուն կարող ես իմ ախտերէս զիս սրբել,
Բաւ է հըպիս մատիդ ծայրով իմ սրտին:

Շընորհէ՛ ինձ ըլլալ փառքիդ քահանայ,
Բարգաւաճիլ քու թեւերուդ շուքին տակ.
Ըրէ՛ ինձ, Տէր, խոնարհութեան պաշտօնեայ,
Ոտքերդ լըւալ, հերով ջնջել գլխահակ:

30. 4. 1972

ՈՂԲ ԺԸ.

Կ'ուզէի քեզ հետ դէմ առ դէմ խօսիլ,
Ինչպէս դըրախտի փափուկ օրերուն,
Երբ կը սիրէիր իմ քովըս նստիլ,
Լոյսելու հոգիս նրման արեւուն:

Բայց ես ծընունդ եմ մեղքի եւ մահուան,
Ովկեաններ պէտք են մեղքերս լըւալու.
Քու կամքդ ինձ տըւաւ մարդու կերպարան,
Ովկեաններ պէտք են վէրքերս լըւալու:

Դի՛ր զիս քու ձեռքովդ կեանքի աւազանն,
Խնամքիդ եմ կարօտ, սիրոյդ անճառին.
Քանի՛ հիւանդներ քեզմով բուժուեցան,
Քանի՛ հէզ սրտեր արցունք սրբեցին:

Զեռքս Աւետարանդ, հրաշքներդ կանթեղ,
Ես քեզի կու գամ ի ծնէ կոյրին պէս.
Ըրէ՛ որ տեսնեմ ըզքեզ ամէն տեղ,
Քանի ինձ մօտ է մեկնիլ աշխարհէս:

Այրի կընոջ պէս, Մարթայի նըման,
Բազուկներս օդին կ'աղերսեմ պարզած,
Տա՛ր զիս դէպի լոյս ու սիրոյ ճամբան,
Բարեկամի պէս ձեռք ձեռքի տըլած:

Դուն ես ողորմած, դուն Բարերար Տէր,
Կը համբուրեմ հողն՝ ուր դուն կոխեցիր.
Թող վարդեր բուսնին, ոչ մեղքի փուշեր,
Ըստուերդ ըլլամ ես, խոնարհած երկիր:

5. 5. 1972

ՈՂԲ ԺԹ.

Գինով եմ ես, ոչ գինիով,
Այլ ցանկութեամբ, տենչանքով.
Օձը խայթեց, երկճի՛ւղ լեզուն,
Եւ սիրտս իջաւ մահաբեր թոյն:

Դարձիր ինձ, Տէ՛ր, ամենատես,
Մուրճն հալածէ՛ իմ աչքերէս.
Հողէ անօթ եմ դիւրարեկ,
Դէմքս աշունքի պէս աղէբեկ:

Արդար ես դու, կամքըդ բարի,
Թէ ոտքիս տակ երկիր սարսի,
Թէ փայլակէ հուր կենդանի,
Թէ շանթ իջնէ յարկիս վըրայ:

Արժանի եմ ես պատիժի՞.
Սոված մարդուն հաց չըտըւի,
Ով պարգեւեց սիրոյ համբոյր՝
Ես փակեցի իմ սրտիս դուռն:

Հինցաւ պատկերդ մեղքերուս տակ,
Կրկին ձուլէ, հալոցդ է տաք.
Մարմինս ըլլայ քեզ տապանակ,
Ո՛չ մեղքի տուն եւ անառակ:

10. 5. 1972

ՈՂԲ Ի.

Բարեգութ Տէր, ի՞նչ խօսքերով քեզ գովեմ,
Քանի դուլքս է հովի ձայն.
Ոտքերուդ տակ փունջ փունջ վարդեր թէ ցանեմ,
Կը մարմըրին, կ'աշուննան:

Ներող ես դու, արդար՝ դործերդ համօրէն,
Անդառնալի ճառագայթ.
Դուն փրկեցիր երկինք հասնող բոցերէն
Հէդ մանուկներ երեք հատ:

Մարդիկ երբոր փորձանքներու մէջ իյնան,
Ձեռքըդ խկոյն կը հասնի.
Ո՛րքան հըրաշք եկան փայլի պէս անցան,
Այնքան ես ցուրտ մընացի:

Մոլորեցայ որդիին պէս անառակ.
Սիրտըս հող է, միտքըս՝ ամպ.
Կարծեցի զիս երկինքներու արեգակ,
Գիշերն իջաւ թախծութեամբ:

Հըպարտ եմ ես իբրեւ ալիք ծովերու,
Կարճ են օրե՛րը կեանքիս.
Ափ մը փոշի եւ խաղալիկ հովերու,
Ո՛ւր պիտ' հանդի իմ հոգիս:

Ընդունէ զիս, Տէր, գրկիդ մէջ հայրենի,
Շատ ես քեզմէ հեռացայ.
Մարդասէր ես եւ ունկնդիր զղջումի,
Սէրըդ վըրաս թող դըթայ:

Երանի՛ թէ հին օրերուն դառնայի,
Երբ իմ հոգիս մանուկ էր.
Երբ հառաչս էր աղօթք առանց կսկիծի,
Լոյսն աչքերէս կը կաթէր:

16. 5. 1972

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԿՈՅՐ ՏՂԱՆ

Ես կ'երթայի դէպի տուն
Արահետէ մ'ամայի.
Աստուած չընէ որ մարդուն
Բախտն հտեւէն չըհասնի:

Յանկարծ անոյշ բոյր կը դգայ,
Ուսկի՞ց կու գայ՝ չի գիտեր.
Ձի գիտեր թէ ծաղիկ կայ,
Նեկտար կ'առնեն մեղուններ:

Ճամբուն եզերքը մինակ
Նստած տըղայ մը տեսայ.
Ան չէ տեսած արեգակ,
Մօրն ըստփանք Աստուած տայ:

Ահա աղջնակ մը կու գայ,
Կ'ըսէ, եղբայր՝ տո'ւն երթանք.
Իր թեւն անոր թեւ կու տայ,
Մուրթ է, կ'ըսէ, տո'ւն երթանք:

Մեր աչքի լոյսն հըրաչք է,
Շօշափելն է գըթուրին.
Խորհեցէ՛ք թէ ի'նչ վատ է
Նըմանիլ կոյր աստղերուն:

Ի՞նչ գիտէ թէ ինչ է տուն,
Ի՞նչ են աչքերը ծաւի.
Ձինքն համբուրող չըթնեցուն,
Կը դգայ բուրումը սրտի:

Գըլուխն հողին խոնարհած, &
Աղքատութեան պէս բարի,
Ձի գիտեր թէ սեւեռած
Յեխոտ ճամբուն կը նայի:

Ան հորիզոն չի ճանչնար,
Ոչ Արեւելք, Արեւմուտք.
Սիրոյ փուշ է մօրն համար,
Վիրաւորուած սրտի գուրթ:

Լըռութիւն է ամէն կողմ,
Գոյնն ալ իրեն չի խօսիր.
Երբոր կու գայ անցորդ հողմ,
Կ'ըսէ, քիչ մը քովս կեցիր:

Տանը մէջ իր տեղն ունի,
Նոյն բանն է լոյս կամ մըթին.
Ձի գիտեր իսկ գոյնն ոսկի
Թասով խըմած իր կաթին:

5 Փետր. 1974

Հ. Վ. Թ.

ՏԽՈՒՐ ՕՐԵՐ

Յաճախ կեանքին դէմ դժգոհ
Ես իմ օրերս կ'անիծեմ.
Կ'ըսեմ, ըլլա՛յ երեկոյ,
Տըխուր բաներ չըտեսնեմ:

Գոնէ ինձ մօտ արեւ դար,
Գոնէ անոյշ դէմք մ'ըլլար,
Սեղմէի ձեռք մը փափուկ,
Եւ զիս կոչէր «Քաղցր եղբայր»:

Ոչ ոք գիտէ թէ ի'նչ կայ,
Ի'նչ կայ սրտիս մէջ թաքուն.
Թող խորհուրդի պէս մընայ,
Նըման անգիր օրերուն:

Ո՛րքան կարօտ եմ մարդու,
Որ աղբիւրի նըման է.
Պատրաստ է զով ջուր տալու,
Եւ վարձք չ'ուզեր ոչ մէկէ:

Ո՛վ գիտէ սիրտս ի'նչ ունի,
Վարդերու դէմ ի'նչ ունի,
Աշխարհի դէմ ի'նչ ունի,
Եկող դացող օրերով:

Ո՛րքան տարի, չեմ գիտեր,
Պիտ' արտասուեմ միս մինակ.
Այս աշխարհն ես չեմ սիրեր,
Սուտ են ժըպիտ ու բաժակ:

Յաճախ իբրեւ փըլատակ,
Ճամբուն եզերքը կանգնած,
Կը փընտում հին յիշատակ,
Մանկութենէս մընացած:

Պատառ մը հաց ինձ կու տան,
Սիրտըս հազար մաս կ'ընեն.
Խօսքեր կ'ըսեն բարութեան,
Թիկունքէս վէրք կը բանան:

Կու գայ քամին փոշելից,
Կու գան ամպերն անձրեւոտ,
Կը պատէ շուրջըս թախիծ,
Մէկը չըկայ սրտակից:

Այս աշխարհն ես չեմ սիրեր,
Քաշած դէմքին վարագոյր.
Չեմ փընտում վառ հայեացքներ,
Իրենց սրտերն են տըխուր:

Ձմեռ, 1974

Հ. Վ. Թ.

28-- Բազմավեց

ԻՄ ՍԵՆԵԱԿՍ

Մէկ աշխարհ կայ ինձ համար,
Մէկ պատուհան դէպ' երկին.
Կապոյտ աչք է սիրահար,
Որ կը նայի անցորդին:

Հոն շուքի պէս մինակ չեմ,
Արեւն ինձի կը նայի,
Հայրենի երգ կը կանչեմ,
Սիրտըս անոյշ կը բացուի:

Շուքն ինկած է յատակին,
Գորգի նման անշուշտ.
Ինձ կը նային սրտադին
Սուրբ նրկարներ տասնի չափ:

Քանի պանդուխտ հայեր կան
Որ ինձ նամակ կը գրեն,
Սրտերն իրենց կը բանան,
Երգեր կ'ուղեն հայերէն:

Սենեակըս շատ փոքրիկ է,
Ոտքը ոտքին չի բաւեր,
Բայց ինձ համար դըրախտ է,
Ինչպէս տըղուն երազներ:

Կ'առնեմ գլորիչ, կ'առնեմ բառ,
Սրտէս կ'առնեմ սիրոյ դեղ.
Խօսքի մը պէս կենարար,
Վէրք կը բուժեմ ամէն տեղ:

Երբ կը բանամ դռնակն հին,
(Երեք հարիւր տարուան կայ),
Կարծես նըւազն է կեանքին,
Որ նոյն սրտով կ'ընթանայ:

Իմ սենեակիս մէջ խօսուն,
Ծորակ մը կայ արծաթի.
Ուսկի՞ց կու գայ ջուրն հոսուն,
Զեռքերու պէս սիրելի:

Քրտաներկու թիւն ունի,
Մի՛ կարծէք բանտն է կեանքի,
Ժլպիտն է որ միշտ կու գայ,
Լացն առանձին կը խօսի:

Կը համբուրէ, կը գըգուէ
Դէմքս ու աչքերըս կարօտ.
Կարօտ կեանքին՝ որ կայծ մ'է,
Վայրկեաններու առաւօտ:

Յաճախ մէկ ձեռքս միւսին
Գիրք կ'ընծայէ կարդալու.
Թեւերուս մէջ կը հանգչին,
Մուսաներ հին օրերու:

Երեք կանթեղ դէմ դիմաց՝
Ինձ կը նային սրտադին.
Աչքերուս մէջ նորաբաց
Արեւակներ կը թըլին:

Սենեակս աղքատ կը սիրեմ,
Խշտեակս՝ առանց ծոպերու.
Սիրտըս այնտեղ կը պահեմ,
Երբոր երթամ ման գալու:

5 Փետր. 1974

Հ. Վ. Յ.

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

ԱՐՀԵՍՏԵՐՆ ՈՒ ԿԵՆՑԱՂԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Գրեց

ԱՍՏՂԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ

Երևան, «Հայաստան» հրատ. 1973, էջ
156 (48 գումար տախտակներ), քառա-
ծալ, լաթակազմ, տպագրակ 15.000:

Խնամքով կատարուած՝ մաքուր ու
չքեղ հրատարակութիւն մըն է այս գոր-
ծը, արժէքաւոր պարունակութեամբ:
Հատորին սկիզբը զետեղուած են հայե-
րէն, ռուսերէն եւ անգլիերէն ներածա-
կաններ, որոնք դործին նկարագիրը ցոյց
կու տան, հաւանօրէն Աստղիկ Գէորգեա-
նէ իսկ պատրաստուած:

Արդարեւ մեր մանրանկարչութիւնը
հարուստ է նիւթերով՝ որոնք կը ներկա-
յացնեն տոհմիկ արհեստներ, գործիք-
ներ եւ անոնց դործածութիւնը, տարազ-
ներ: Մեղուաջան Աստղիկ Գէորգեան
մեծ խնամքով հաւաքած է իր մանրա-
նկարչական նիւթերը, դանոնք քաղելով
Երևանի Մատենադարանին ձեռագիրնե-
րէն, որուն համար մեծապէս եւ ի սրտէ
հրախտապարտ ենք բազմապատակ հե-
ղինակուհիին եւ Մատենադարանին ձեռ-
նահաս վարչութեան, որ այս շատ ըն-
տիր ու կարեւոր աշխատութիւնը հրա-
պարակ հանուած է:

Ներածականին մէջ կը տրուին կարե-
ւոր բացատրութիւններ՝ որոնք բնական
է գործը աւելի մատչելի կ'ընեն հասա-
րակութեան: Տախտակներուն վրայ տըր-
ուած նիւթերուն մասին եղած բացա-
տրութիւնները, առանց մասնագիտանա-
լու, գոհացուցիչ են: Անտարակոյս, հոս
տրուած մանրանկարչական նիւթերն են
որ կարեւորագոյն են եւ կենսական՝ ա-
պագայ ուսումնասիրողներուն համար:

Մանրանկարչական տախտակները, ո-
րոնք կը պարունակեն երկրագործական,
այգեգործութեան, խաշնարածութեան
եւ այլ բազում խմբաւորումներ, դուռնա-
ւոր եւ շատ հետաքրքրական են: Աստ-
ղիկ Գէորգեան հմտութեամբ ընտրած է
իր նմոյշները: Անտարակոյս՝ մեծաքա-
նակ նիւթ ունենալով ձեռքի տակ եւ ըս-
տիպուած ըլլալով սահմանափակուիլ,
ինչպէս որ ինքն իսկ կը խոստովանի,
շատ դժուար եղած ըլլալու են իր ըն-
տրութիւնները:

Թող ներուի մեզի դիտել տալ որ
«կապերտներ (տապաստակներ)» (էջ 10)
նոյն բանը չեն ներկայացներ: Կապերտ-
ները գիտենք որ կապերտներ են, որով-
հետեւ այդպէս ալ ներկայացուած են
մեր մատենագրութեան մէջ, Ե. դարէն
մինչեւ մեր օրերը: Սակայն «տապաս-
տակ» անգամ մը միայն գործածուած է
մեր մատենագրութեան մէջ, Ոսկերե-
րանի «Յաւատարմագիրն Մատթէոս»
հայերէն թարգմանութեան մէջ (հրատ.
Վենետիկ, 1828, երկու հատոր): Բազ-
մապատակ Հ. Վարդան Վրդ. Հացունի,
իր մեծարժէք «Ճաշեր եւ Խնճոյք Հին
Հայաստանի մէջ» (Վենետիկ, 1912),
կ'ըսէ որ հայ թարգմանիչը «տապաս-
տակ» բառը «իւր կողմանէ եւ բնագրէն
անկախօրէն կը յաւելու» հայերէն թարգ-
մանութեան մէջ (էջ 55): Այսինքն՝ Ոս-
կերեանի յուշարէն բնագրին մէջ չկար
«տապաստակ», սակայն հայ թարգմա-
նիչը Ոսկերեանի բնագրին այդ մասը
պարզելու համար՝ թարգմանութեան մէջ
մտցուցած է «տապաստակ» (Ոսկ. Մտթ.
Բ. 69): Յետոյ այս թարգմանութեան
միջոցին գործածական էր «կապերտ» եւ
«բազմական», որով ըստ երեւոյթի՝
«տապաստակ» տարբեր էր բազմականէն
կամ կապերտէն: Շատ հաւանարար՝